



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԵՒԱՅ ԸՆԲԱՐԹ 25 ՅՈՒՆԻՍ 1866

ԹԻՒ 782

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԵՒԱՅ 25 ՅՈՒՆԻՍ

Պատերազմը կը յառաջանայ և կը տարածուի բոլոր
 Կերմանիոյ մէջ, Այս երկրին երկրորդական զանա-
 զան տէրութիւնները արդէն սկսան բաղաժախտ զօրք
 պատրաստել և խուսիոյ գէմ յուղարկել. որ ինչ-
 պէս յայտնի է, փութացաւ յարձակելու Հէս-Աւ-
 սէին, Սաքսոնիայի և Հանովերի տէրութեանց վե-
 րայ և նոյն երկրները գրաւեց. Այս բանը այն-
 պիտի արագութեամբ մի ըրաւ, որ ամենքը զարմա-
 ցան. այսու ամենայնիւ չյաջողեցաւ արգելելու
 զփառորութիւնը զօրաց յիշեալ երեք փոքրիկ տէրու-
 թեանց, Պատերազմը տէրութիւնն ևս պատերազմ հրա-
 տարակեց իրոսիոյ գէմ. և հրաման տուաւ որպէս-
 զի իւր զօրքանակը, որ 60,000 հոգիէ բաղկաց-
 եալէ, փառորութիւնն արագութեամբ հետ : Կը-
 հաստատեն թէ իրոսիայի զանազան բռնութիւն-
 ներ կը ընեն Սաքսոնիայի մէջ, և այս երկրին բնակ-
 չացը վերայ երկու միլիոն թալէո տուրք գրեւ եւ :
 Սաքսոնիայի թագաւորական զեռքաստանը իրակա-
 քաղաքը և Հանովերի թագաւորը լնդղիւ գնաց :

Իտալիոյ կառավարութեան քով եղած իրոսիոյ
 դեսպանը պաշտօնական կերպիւ յայտնեց թէ բոլ-
 րովին սուտ է տարածուած այն լուրը, թէ իրոսիան
 օգնական զօրք պիտի յուղարկէ Աւստրիոյ տէրու-
 թեանը : Կանի մը լրագրիւր կը հաստատեն նաեւ թէ
 իրոսիան հաստատուն պիտի պահէ իւր չէզոքութիւնը,
 որչափ ժամանակ որ Վաղդիան չէզոք պիտի մնայ :
 Իսկ եթէ Վաղդիոյ տէրութիւնը իւր չէզոքութիւնը
 չուծելու ըլլայ, յայնժամ իրոսիան ալ իւր օղտից
 պահանջմանցը համատեղ պիտի վարուի :

Փարիզէն կը դրեն լսնութեան տանս Պէլժ լրագրին
 թէ Վաղդիան գիտողութեան երկու զօրքանակ կը-
 պատրաստէ, որոց մէկը իւրեւս զետոյն սահմանա-
 գլուխները և միւսը Ալպան լեռանց մօտ պիտի մնայ :
 Այս լուրը թէպէտեւ տակաւին ստուգութեան կարօտ
 է, այսու ամենայնիւ շատ հաւանական կերեւի :

Վիեննայէն լսնութեան թագաւորը ներկայ պա-
 տերազմին առթիւ առ իտալացիս ուղղած յայտարա-
 րութեանը մէջ կըսէ, թէ Աւստրիան շատ դարձեալ
 ի վեր պիտաւոր պատճառն է իստիւնոյ բաժանման :
 Գերութեանը և անոր բարոյական ու նիւթական
 զօրքաւորութեանցը, և կը տիրապետէ ու բռնութիւն
 կը բռնեցնէ իտալական նահանգաց ամենէն պատուա-
 կան ու գեղեցիկ երկրին, այսինքն Վենետիկի :

Լնդղիան իւր նաւատորմիւնները մեծ գործունէու-
 թեամբ կը պատրաստէ : Ընդհանր, Կորվէկիայի և
 Տանիմաքայի տէրութիւնները նիզակակցութիւն
 հաստատեցին մէջերին :

Լնդղիոյ բարլամէնթին ամսոյս 7ին դումարուած
 նիստին մէջ պաշտօնէից խորհուրդը քուէարկութե-
 առաւ իրեն չունեցաւ ընտրողական կարգադրու-
 թեան խնդրոյն վրայօք. ուստի պարտաւորեցաւ իւր
 հրաժարականը տալու : Այսու ամենայնիւ վեհափառ
 թագուհին չընդունեցաւ անոնց հրաժարականը :

Սաւորիտի մէջ զինուորական ապստամբութիւն մի
 տեղի ունեցաւ, որուն կուսակիցները և զբոլիւնները
 վոնտուեցան յիշեալ մայրաքաղաքէն, սակայն կերեւի
 թէ արիւնհակ կուիւ մը ետեւ. վասնիկ կը հաստա-
 տեն թէ Կարլաւէզ զօրապետը վերաւորուեր է :

Լնդղիան, Վաղդիան և ուրիշ զլսաւոր տէրու-
 թիւնները թէպէտեւ կը խոստովանին թէ իւրաքանչիւ
 Դիւր անձխտելի իրաւունք ունի զինու զօրութեամբ
 Սոլտովալաքիա մտնելու. այսու ամենայնիւ կը-
 խրատեն անոր որ այժման պարագայից մէջ խոհե-
 մութիւն բանեցնելով իւր իրաւունքը ի գործ չդնէ,
 Լնդղիոյ քաղաքակառ ծանր վիճակը ևս առաւել

Հիփոթեկոն համար :

Միտոր Լայարտ պաշտօնէին այս խնդրոյն վրայօք
 խօսելով Լնդղիոյ բարլամէնթին մէջ, ըսաւ թէ
 Սոլտին իրաւանիոյ կառավարութիւնը խոհեմաբար
 իրաւ տուաւ իւրաքանչիւ Դիւրան որ չափաւորու-
 թիւնը ձեռքէ չձգէ այս գործոյն մէջ ուստի կը
 յուսամք թէ օսմանեան կառավարութիւնը իւր զօրքը
 չընկեր ի Սոլտովալաքիա. ինչու որ այս բանը
 կը խախտէ պատերազմը բոլորքեւ նաեւ Արեւելի մէջ և
 շատ գործող հետեւութիւններ ունենալ. Սակայն
 կը կրկնեմ թէ այս գործոյն վրայօք Բ. Դիւրան ու-
 նեցած իրաւունքը անձխտել է :

Կարլաւէն կայսրը, Յունիսի 11 ամսամբող ըստ
 նոր տուարի՝ նամակ մի գրեց իւր արտաքին գործոց
 պաշտօնէի մօտիկ Տրուին առ Լնդղին. որով ներ-
 կայ քաղաքական շփոթութեանց մէջ Վաղդիոյ տե-
 րութեան բռնելու ընթացքը մանրամասնապէս և
 անկեղծաբար կը յայտնէ : Ահաւասիկ այս կարեւոր
 նամակը, որ մեծ տպաւորութիւն ըրաւ լնդղիոյ
 մէջ, և որուն վերայ մեր ընթերցողաց ուշադրու-
 թիւնը կը հրաւիրեմք :

«Բեմարգոյ պաշտօնէի»

«Այնիւն Փարիզի մէջ գումարուելու դեսպանաժո-
 դովէն սպասուած խաղաղութեան յոյսերը անհետ
 կըլլան հարկաւոր կը համարուի շրջաբերական եամակ
 մի զլկելով օտար տերութեանց քով ունեցած մեր
 դեսպաններուն» բացատրելի ճշգրտաբար կը գործի
 կառավարութիւնն միտք օգնէր հաղորդելու յիշեալ
 ժողովոյն, և միտքամայն յաւանք ամենուն գրա-
 վարական ընթացքը, որուն պիտի հետեւի ի ներ-
 կայութեան ծանր դեպքերուն որ կը պատրաստուին :
 «Այս յայտարարութիւնը» մեր քաղաքականութեան
 ճշմարիտ եզրակացն անկեղծաբար պիտի ծանուցանէ :

«Երբ դեսպանաժողովը գումարուելու ըլլար, գի-
 տեր որ ձեր խօսքը որոշ է պարզ պիտի ըլլար. վասն
 զի պիտի չընտելի յանուն իմ, քեզ, երկիր առ-
 նելուն ամենեւին միտք չունիմ որչափ ժամանակ մը
 Եւրոպիոյ հաւատարակութիւնը չաւարտի : Եւ
 սոյնգիւ չեմք կրնար խորհիլ մեր սահմանագլուխ-
 ները ընդարձակելու միայն երբ Եւրոպիոյ անխա-
 ճանցից փոփոխութիւնն անսակաւ յոգնու մեծ տէրու-
 րեան մը, և երբ սահմանակից գաւառները խըն-
 րեն, իրենց ազատ կամքովն միանալ Վաղդիոյ հետ :

«Այս պարագաներէն դուրս, առեւի արժանաւոր
 կը կարծեմ որ Վաղդիան երկիր ստանալէն նախա-
 պատիւ համարի զմեծագին առաւելութիւնը բարեկա-
 մաբար կեանակցելու իւր զրաջեաց հետ, յարգելով ա-
 նոնց անկախութիւնը և անոնց ազգայնութիւնը :
 Այս զգոյցներէն զարթեալ և խաղաղութեան
 հաստատուն մնալէ ի վնտ ուրիշ նպատակ չունե-
 նալով, հրաւիրած էի Անգղիան և Ռուսիան, որ
 միաբանութեամբ հաշտարար առաջարկութիւններ
 ընենք պատերազմի պատրաստուող տերութեանց :

«Համաձայնութիւնը չեղօք տերութեանց մէջ հաս-
 տատուելով, միայն այս բանը Եւրոպայի համար ա-
 պահովութեան առ հաւատեալ պիտի մնայ : Բարձր
 անկողմնապաշտութիւն մի ցուցուցած էին որոշելով
 որպէսզի ի կախ մնացած ներկայ խնդիրներէն ի
 զատ ուրիշ վիճաբանութիւններ չըլլան դեսպանաժո-
 դովոյն մէջ : Եւ այս խնդիրները լուծելու համար
 կը կարծեմ քե պետք էր անկեղծաբար քննել զանոնք,
 անոնց վերայ ծածկուած դեսպանական քողը վերցը-
 նել և ծանր ուշադրութիւն մատուցանել վեհապե-
 տաց և ժողովրդաց օրինաւոր բաղձանացը :

«Վեհ որ յայտնեալ է, երեք պատճառ ունի :
 «Բարոսիոյ աշխարհագրական կառուցութիւնը, որուն
 սահմանները աղէկ որոշուած չեն :

«Գերմանիոյ բաղձանքը, որ իւր ընդհանուր հար-
 կաւորութեանցը առեւի համաձայն քաղաքական նոր
 կարգադրութիւն մի կը խնդրէ :

«Հարկաւորութիւնը» գոր ունի իտալիան իւր ազ-
 գային անկախութիւնը ապահովելու :

«Չէ որ տերութիւնները չին կրնար օտար երկիր-
 ներու ներքին գործոցը միջամտել ըլլալ. այսու ա-
 մենայնիւ գերմանական դաշնակցութեան հաստատու-
 ելուն մասնակից եղող արքունիքը իրաւունք ու-
 նեին քննելու և տեսնելու որպէսզի չըլլայ քե խնդ-
 րուած փոփոխութիւնները Եւրոպայի մէջ եղած այժ-
 մեան կարգադրութեան վնաս պատճառեն :

«Մեր կողմանէ կը փափաքեմք, որ դաշնակցու-
 րեան երկրորդական տերութիւնները առեւի մտերիմ
 միութիւն ունենան, առեւի զօրաւոր կարգաւորութիւն
 մի և առեւի կարեւոր կացութիւն և պաշտօն մի :
 Բարոսիոյ համար կը փափաքեմք որ առեւի համաւե-
 ռութիւն և գորութիւն ունենայ Հիւսիսային կողմը :
 Իսկ Աւստրիոյ համար՝ կուգիմք որ իւր բարձր կա-
 ցութիւնը հաստատուն պահուի Գերմանիոյ մէջ :
 Կը փափաքեմք նաեւ որ արդար փոխարինութեամբ
 մը՝ Աւստրիան կարող ըլլար վեճերիկ Խաղաղոյ
 քով տալու : Վասնիկ, երբ Բարոսիոյ ձեռ միաբա-
 նութեամբ և առանց ուշադրութիւն մատուցանելու
 1852ին եղած դաշնակցութեանց, պատերազմեցաւ
 Տանիմաքայի դէմ յանուն գերմանական ազգայնու-
 րեան, իրաւացի կերեւի ինձ որ նոյն սկզբունքը
 ձանաչէ իտալիոյ մէջ, կատարեալագործելով այս
 թերախնդրոյն անկախութիւնը :

«Վնա այս օրինակ եւ գաղափարները» գորն Եւ-
 րոպիոյ անդորրութեան սցովցը համար, պիտի ջա-
 նայինք ի գործ դնել տալ. իսկ այսօր, կերեւի քե
 զինու բաղձը միայն պիտի որոշէ այս բանը :

«Այս պատմական դեպքերուն առջեւ ինչ ըն-
 քացը կը վայելէ արդեօք Վաղդիոյ : Միք միւր տնա-
 ճութիւնը յայտնելու է, ինչու որ Գերմանիան 1815
 ին զաղնագորութիւնները անկախող կը գտնէ իւր ազ-
 գային հակամիտութիւնները կատարելու և իւր ան-
 դորութիւնը հաստատուն պահելու :

«Սկսուելու պատերազմին մէջ երկու բան կայ, որ
 մեր ուշադրութիւնը գրաւած է. այսինքն Եւրոպական
 հաւասարակշռութեան պահպանուիլը և խաղաղոյ
 անկախութեան անվնաս մնալը, որուն հաստատուե-
 լուն նպատակաւորաց եղանք : Բայց այս երկու օ-
 գուտները պահպանելու համար՝ միք Գաղղիոյ բա-
 րոյակուն գորութիւնը բաւական չէ. և իւր խօսքը
 լոյսի ընելու համար պիտի պարտաւորուի՝ արդեօք
 տուրք բաղձնէ : Չեմ կարծեմ որ այս բանը պատահի :
 Երբ ընդդէմ մեր ջանքի, խաղաղութեան յոյսերը չեն
 կատարուի, այսու ամենայնիւ պահովութեան մը՝
 պատերազմով տերութեանց յայտարարութիւններէն,
 քե ինչպէս և ըլլայ պատերազմին վախճանը, այն
 խնդիրները որ մեզի կը զրգայնէ՝ ամենեւին պիտի չը-
 լուծուին առանց Վաղդիոյ հաւանութեանը :

«Արեւմտ ուշադիր չեզոքութեան մէջ մնամք, և
 մեր անշահասիրութեան վերայ հաստատուն ըլլալով
 մնաւական Եւրոպիոյ ժողովրդաց համար մեր ան-
 կեղծ փափաքը յայտնելով որպէսզի իրենց կուսակց-
 րը մոռնան և միաւորուին քաղաքակրթութեան :
 ազատութեան և յառաջադիմութեան նպատակաւ մի
 վստահ ըլլանք մեր իրաւանցը վերայ և հանգարտ
 մեր գորութեանց մէջ :

ԱՅՈՒՆԻՆ

Արշալուստի 780 բռնոյն մէջ խոստացած էինք՝ հրա-
 տարակել արժանապարզ պարոն Ստեփան Ոսկանեա-
 նին ճառը՝ գոր սրբոց Հոգիաբանեանց տօնախմբու-
 րեան օրը, նոյն կուսանաց անուամբ կառուցեալ
 վարժարանին մէջ կարգաց : Ահաւասիկ այս ճառը :

Մեծարգոյ Տիկիններ և Պարոններ,

Օրիորդները, քաղցը երգով մը, իրենց սրտին ուրա-
 խութիւնը յայտնեցին և արժանաւորապէս սկսան Հոգի-
 սիւնանց տօնախմբութիւնը, աղօթքէն ետեւ հայրենիքի
 անունը փառաւորելով :

Միք ներելի է՝ մեզ այս տօնախմբութիւնը շարա-
 նակել և նմանապէս մեր սիրտին ուրախութիւնը յայտ-
 նել ոչ երբ չենելով, այնքան փառաւորելու չունինք

միւր ձայնին վրայօր, հասարակական խոսակցելով ազգայնէր հանդիսականներու հետ : Կըհաւանինք մտադիր որ միւր խօսակցութիւնը մեծ զուարթութիւն չափաի պատճառէ և գուցէ իսկ փոքր ձանձրութիւն տայ երբեմն հին ճամբարութիւններ կրկնելով : Սակայն ո՞ր օրերու համար այս ճամբարութիւնները պէտք է պահել և ո՞ր արդեօք զանոնք զգալի և չըջալիկի ընել տալու է եթէ ոչ ընտիր բազմութեան մ'առջև ու այսպիսի հանգիսի մը մէջ : Ա՛հ ճամբարութիւնը, կապ ճամբարութիւնը, յայտնաբերու համար, այնքան քիչ պատեհն ունի որ իր պաշտպանները չեն կրնար լռութիւն պահել երբ պարագայները կընկերեն, վասնզի կըզգան որ խօսելով կամ անոր արձագանգ ըլլալով՝ պարտաւորութիւն մը կատարած կըլլան : Եւրոպական պարտաւորութիւն, որնոր խիղճին թեթեւութիւն կուտայ և որնոր համոզումները հնազգութիւնը կըսօզրիցեն մեզ վատութիւնը միշտ արհամարհել և անոր տուած հարուածներէն չվախնալ բընաւ ամենեւին :

Կըհամարձակինք ուրեմն խօսիլ և հանդիսականներուն ուշադրութիւնը վայրկեան մը երգերէ հետու տանիլ : Բայց ի՞նչ բանի վրայ արգեօք ներկի է հիմա խօսիլ՝ եթէ ոչ կրթութեան : Միթէ կրթութեան եւանդը չ'որ բարեխիտ և աղնւա տիկին մը հիմնադր բրաւ այս շէնքին, միթէ կրթութեան սէրը չ'որ զայն փր աշակերտութիւններով զարդարեց, միթէ կրթութեան ոգին չ'որ այսօր զմեզ կըծողմէ և սիրտեմնու մէջ յոյս և խրատայ կըծաւալէ, և միթէ կրթութիւնը պաշտպանելու համար հաստատուած չ' : Ուսումնասէր Ընդերութիւնը, որնոր հիմա հոս ներկայ կըզտուի և իր ատենապետին բերնով, պատիւ ունի ձեր ուսումնասիրութիւնէն հրապարակաւ շնորհակալ ըլլալ : Այո՛, կրթութեան շէնքի մը մէջ կըզտուինք և կրթութեան տեսիլներով կըպաշարուինք ամենայն : Հարցնենք ուրեմն մենք մեզի թէ ի՞նչ է կրթութիւն և թէ ի՞նչ կերպով կըհիմնուի այն : Առաջին անգամ չէ որ այսպիսի մեծ խնդիր մը մեր միտքը կըյուզէ և գեղեցիկ կըհարկադրէ խորին քննութեան ներքեւ ձգել զայն : Որդէն 1859ին այս նիւթի վրայ մէկ երկու դիտողութիւններ բերել ինք քանի մը ազգայիններ ըզգուշացրեցու համար այն անհիմնեթ գաղափարներէ՝ որ լոնց զոհ եղան և որոնց ծիծաղելի հետեւութիւնը մինչև հիմա իրենց անպատուութիւն կըբերէ :

«Կրթութիւն կանոնակար, կըսենք, այն խնամքը՝ զորնոր մարդ կընդունի տրիշներէն իր հոգիները պահելու և բարգաւաճելու համար : Ուրիշ ըսելով կամ ընտանիքը կամ քաղաքը և կամ ազգը կըմանանք : Ուսիկ կըհետեւի թէ այն մարդը միայն անկիրթ է որնոր ընտանիքի, քաղաքի կամ տոհմի մը խնամքէ զուրկ է, այսինքն ծնունդն ալս երեսի վրայ կըմնայ բոլորովին : Այսպիսի վիճակ մը միտքի պարզ ենթադրութիւն կրնայ սեպուիլ և բնութենէ դուրս է : Եւ և վայրենին հայր և մայր ունի և ծնելէ ետեւ անոնց խնամքով կըմեծնայ : Ընդհանրապէս խօսելով երկու տեսակ կրթութիւն կընշմարենք. մէկ մը այն՝ զորնոր տեղի աւանդութեամբ կընդունինք քան թէ զրութեամբ մը, և մէկ մ'ալ այն՝ որնոր գիտութեանց մշակութենէ կըբխի : Աւանդութեամբ ընդունած մեր կրթութիւնը բոլորովին գործնական է : Մարդը ընտանիքի կամ քաղաքի կընդունի զայն առանց զգալու թէ ի՞նչպէս կընդունի : Եւրոպացիները կըմեծնայ բնակարանին իր նախորդին ազգեցութեամբ և ուղղակի կ'առնու անկէ ըզու, օրինակներ, կարծիքներ և սովորութիւններ : Գնդը կըսովորեցնեն սովորեցու ինչ որ իրենք սովորեցան նախնիներէ, և որովք կըհետեւին ծնողներու գրեթէ կուրօքին : Հետեւելու կամ նմանելու բնական այս միտումը մարդկութեան զարգանալուն հիմն է, վասնզի անհատին է նմանիլ առանց քիչ մը լայնցնելու : Ամեն մարդ ուրեմն փոքր իշատէ կըթութիւն կ'առնու և սեպէ թէ անկանց կըծաւաճէ իր ծնած տեղին աւանդութիւնները : Այսինքն ամենեւնեւաւոր են, կրօնք և արհեստ : Այսինքն կ'ամբողջ իր բարոյական ամեն տեսիլները և օրէնքը, երկրորդը՝ կըյայտնէ բոլոր այն գիտութիւնները կամ փորձերը որոնցմով մարդ իր ապրուստը և պահեստը կրնայ հոգալ : Հասարակօրէն այս տեսակ կրթութեան ուշ չըլլալի, բայց իր ազգեցութիւնը անուրանալի է ամեն տեղ : Անով մարդը կըպահուի իրաւի, բայց շատ քիչ անգամ կըբարձրանայ, վասնզի իր միտքը հազիւ թէ կ'արդիւնաւորէ ընդունածը, և որովհետեւ տգիտապէս կըհետեւի իր աշխատութիւնը գիտելով չըպահուի : Երկու հաւասար տղէտ պատանիներ, որոնք ի՞նչ կըբնակին, մէկը Սախայի մէջ և միւրը Եւրոպայի կողմերը, անհուն տարբերութիւն մը կընկերկայացնեն, վասնզի ընտանիքին,

քաղաքին կամ տոհմին ծիրերը, զորոնք բնականապէս կ'առնուն, հաստատութիւն չունին իրարու հետ : Եւրոպականին միտքը անելի արթնուն է և ա՛րտը տեղի զուարթուն, լայն տեսիլներ ունի, համարձակութեամբ կըզատէ և զիւրաւ շխտարհէր իր նմաններու առջև : Սախայինը ընդհակառակն՝ ահաբեկ և այլայլելի կերպարանք մ'առնի, և իր ստուերէն կըվախնայ : Կրթան իր երեւակայութիւնը վատկուծ կըվայրի աշխարհ իր միտքը մտաշուլ պաշարուած է : Կըստնարհի մինչև ի վատութիւն երբ տար է. բայց երբ կերպով մը զօրութիւն կընդունի իր յանդգնութիւնը ամեն սահմանէ կեղծէ :

«Պատմութեամբ ընդունած կրթութիւնն սրտը նըպատակ ունի, հաստատ զրութեանց և օրէնքներու վերայ կըհիմնուի, որոնցմով ոչ միայն նախնի փորձերը և աւանդութիւնները կըպահուի, այլ օրէ օր անելի կատարելութիւն կ'առնուն : Կըստնայի մէջ որքան լուստւորութիւն կամ բարօրութիւն կայ՝ նէ, այս ետքինով և զերէ և այսօր անով միայն իր հրաշակերտը կըպահուի : Այս կրթութեան նպատակն է մարդու մարմինը, միտքը, սիրտը հասարակապէս խնամել, օրօրանէ սկսելով մինչև այն օրը որ անկեա անձնիւնալն է և փր կամբով կըկատարուի : Ամեն բանէ առաջ՝ զերին և ապահով ճամբայ մը կընտրէ արդիւնաւոր ընելու համար նորա ծին միտքերու այն ձիւրքերը որոնք բնութենէ շնորհուեր են : Երկրորդ՝ այս ձիւրքերը կըքնեն ուշի ուշով և զգուշութիւն կընէ որ փնտ մը չկրն անոնք : Պատմութիւնը որ զանոնք արհամարհել կամ չտեսնելու զարեկ և մտաւոր էակը զգուշուն մեկնայ սեպելով բնութեան հակառակ կրթութիւն տալ, ինչպէս կընեն ունիք, ճամբարաբարբարոթիւն է : Հայր կամ մայր և կամ վարժող որոնք փոխառնակ աղային բնութիւնը գնեն իր կամքերին ու նախապաշարութիւններ կրթութեան կանոնի տեղ կըզնեն, անոր թարմ միտքին զահիճ են քան թէ օժանդակ : Այսինքն հայրը իրաւունք ունի իր սուղային վերայ, կարծելու չէ որ անկեա իրաւունքէ զրուած ըլլայ իր հօր առջև : Անոր հոգեկան կամ մտական փնտ առաջէ կըթութեամբ մը, բոլոր կեանքը թեւեւաւորէ, և հայրը և վարժողը այն իրաւունքը չունին բնաւ : Օրինակաւ ուր մարդ կըսկսի խորհիլ և կամենալ, այն փամանակ թորովին ինքնօրէն է և իր կրթութեան հոգը իր վրայ կ'առնու : Հայր մը նա՛ մտնաւա՛նք մայր մը յիշու են միշտ այն անհոտակի կէտը՝ որպիսի գգու չանան տղային իրաւունքը որոյ տակ տեսնել կամ անհոտութիւն ընելէն որ անոր միտքին մէջ անբերրի տեսիլներ և անյանախիթ սերմեր չըլլան երբ : Թէ՛ հայրը թէ՛ մայրը և թէ՛ վարժողը չմտնալու են՝ ամենեւին որ ստատմանակեայ հոգաբարձու են. ընդհակառակն ուղայ մը իր կրթողն է մինչև ի մահ և պարտաւորութիւն ունի առած կրթութիւնը բոլոր կեանքին մէջ բարգաւաճել միշտ իրեն և չաա անգամ հասարակութեան օգտին համար : Այն այն երիտասարդին եթէ այս կրթութիւնը հիմն չունի կամ ծուռ է . . . Կըկրկնենք, գիտութեամբ արուած կրթութիւնը տղային մարմինը, միտքը, սիրտը հաստատապէս կընշալէ և անոր ապագան կըպատրաստէ : Եթէ այս երեքին մէկը միւսին զոհուի՝ կրթութիւնը վտանգի մէջ կ'իյնայ և թէ՛ շուտ և թէ՛ ուշ տղային գգալի կըլլայ անոր դառն հետեւք : Երեքն ալ իրարու հետ այնպիսի յարաբերութիւն մ'առնին որ մէկին տկարութիւնը կամ հիւանդութիւնը նշանակելի կերպով կ'ազդէ միւսներուն վրայ : Հին ասանի փիլիսոփայ մը՝ քսաւ. «ով որ առողջ մարմին ունի առողջ միտք ունի», և ամեն մարդ իր վրայ կրնայ փորձել այս ճամբարութիւնը : Միտքի ապահովում իրենց գրեթէ միշտ հետեւութիւն մ'է միտքի մը, ինքն սուտ գիտութենէ կէս կատար և գէշ ուսմունքէ կըծաղի» . . .

Ահա ի՞նչ կըզրկինք եօթը տարի առաջ և փիլիսոփայութեան բարձրութեամբ կամ խնդիրը մեծցնելով կուշտատէինք մեր ազգակիցներուն ճամբարա տեսիլ մը տալ կրթութեան վրայ : Այն փամանակ մեզ առաջնորդ էր Քանդ և մենք փառք կըսեալինք անմահ փիլիսոփային շահալէն չզարտուղի գիտութեանց փշալիք դաշտէ անցնելու տուն : Այն փամանակ կրօնաւոր մը ազգասիրութեամբ ներկուած, կրթութեան խնդիրը կրօնի և դարձի խնդիր կընէր և տղայութիւնը կըմտրէր՝ ստիպելով զմեզ որ իրեն գէ՛մ գիտելնք և մեր օրուան Արիստոտելին խօսքերը մեզ վահան ընենք : Ո՛ր երայսօր այն կրօնաւորը և իր հնարած կրթութիւնը, որն որ Հայոց փառք և նորոգութիւն պիտի տար, ո՞ր երայն ազգայինք՝ որոնք անոր ստուերին մէջ լոյս կըբնտնէին, ո՞ր երայն ազգութեան և ազգութեան կար-

ծուած պաշտպանները՝ որոնք ուղեանայով թեթեւութիւն կրօնաւոր մը իրենց ուղեցոյց կընտրէին գիտութեան տաճարը մտնելու համար : Կ՛հ, մի հարցնէր թէ՛ ո՛ր են իրենք, բայց հարցուր և կըտեսնես շուտով որ իրենց ուղեցոյցը հագուած կապուած և ուշադրեալ կոնակը հեծած՝ կեանք կըվարէ, կտօք կըվարէ, ձի կըվարէ Փալիզի Եղիսեան դաշտին մէկ ծայրէ մէկալ ծայրը . . .

Կըկրկնենք, ո՛հա՛ կրթութեան վրայօք գրածնիս 1859 ին և ահա այն ատենուան մեր կարծիքներուն մէկ մասը : Այսօր տող մը չենք ուզեր վերցնել անկէ թէպէտեւ պատրաստ ըլլանք շատ բան տեղեկելու հոն, գիտութեան, և անձնական գիտողութիւններէ օգուտ քաղելով : Գնդը կըզաւանինք միշտ փիլիսոփայներու փիլիսոփայ, բայց կրօնները որ իր վահանը քիչ մը ծակուած է, և տղատեան գէ՛մ ծակուած վահան գործածել մեծ խոհեմութիւն չթուիր մեզ : Մէկ խօսքով՝ Քանդը և իր փիլիսոփայութենէ ծագած ձիւրքը կըթուրուէր գիտնապիտեալու և մենք կըզաւանանք, ոչ իրեն գէ՛մ (այսպիսի վատութիւն մեզմէ յուսալի չէ երբէք) հապաղէս զիտութիւն : Ինչո՞ւ : Վասնզի այսօր ուսումնասիրութիւնն և ազգայնութեան վրայ հիմնուած ընդհանրութիւն մը՝ մեզմէ կըխաղէ որ զործադրութեան ձեռք գործենք և արդիւնքը յոյս տանք : Մեզի համար այսօրեւեակ փիլիսոփայելու և խորհելու առնին չմտնք՝ հապաղ զործելու : Կըհարկադրուինք որեւմն տեսնալու ինչ դաշտը ձգել և փորձելու ապահովել յիշելով միշտ որ արեւելեայ օղբ կըծծենք, օղ ծանր, վահանցողիչ և բոլորովին դրկուած անդաւոր տարբերներէ : Այլ փորձերը յոյս տուին և օրէ օր անելի յոյս կըման որ, հոս կրթութեան խնդիրը ոչ քաղաքային խնդիր է և ոչ ազգային, հապաղ ընտանիքի և ընտանիքի մէջ արեւմն պիտէ որ հաստատուի կրթութիւնը, ընտանիքի մէջ պահուի և ընտանիքի մէջ արմատ ձգէ եթէ կրօնափաղիք անոր արդիւնաւոր ըլլալ տեսնել : Եւ ի՞նչ է ընտանիք, եթէ ոչ կընէ : Ուր սակիս իր պաշտօնը չկատարէր, իրեն արժանի յարգ չ'ընդունիր և այնպիսի կերպարանքով մը կըբերի որ կ'ընտան ատուապէս նախատինք, միթէ՞ կրնանք երեւակայել ընտանի խումբ մը սիրով կապուած, բարքով գնուած և ապագային հոգով գրաւած՝ հանգստութիւն վայելելու նպատակաւ : Կ՛հ երբէք : Կընդ գաւիկն հետ ընտանիք կըյուրնայ և կրնայ ըստիլ թէ երկուքը մէկին աշխարհ կուգան ու նոր կեդրոն մը կըհաստատեն գործունէութեան, հոգեբու և յոյսի յոյս՝ որնոր, ինչպէս կընէ Ֆլորեն, մարդու սիրտի կեանքն է (1) : Այնչաւու զարոյցը հարկաւոր է իբրեւ քաղաքային կեանքի պատրաստութիւն, ազգը կամ տեղեկութիւնը ապարկեց մը կընծայեն որ մարդկութեան վերաբերուած պարտաւորութիւնն իրենք ստիլով, բայց երբ կրթութիւնը ընտանիքի մէջ չսկսի՝ խնամու հիմքու վրայ գրուած չէնք մը կընմանի, ապագայ չունի և լուստաւորութիւնը չըլլաւոր ապաւէն մը ընտրել հոն վախճալով որ փնտալին ներքեւ չմնայ : Եթէ ընտանիքի ոգին կ'ընէ և եթէ ճամբարա կըթութիւնը սկսիւր կ'առնու ընտանիքի մէջ, յայտնի է որ օրիորդներուն կրթութիւնը գերազույց կարեւորութիւն ունի և զանցաւորութեան եւնակայ չըլլաւոր ըլլաւորանց յիգիլն կամ ազգին մեծ մեծ փնտանք պատճառելու : Եւ ահա անոր համար է որ Պաղլաք կ'ըսէ տեղ մը. ազգի մը ապագան մօր մը կրթութեան մէջ բնտնելու (2) : Եւ արդարեւ. չկայ զրութիւն մը որ մօր մը նայուածքէն անելի ուժգին կերպով ազդէ. չկայ նշալ մը որ իր խօսքերէն անելի վաւախուն կերպով լուստուրէ. չկայ կամք մը որ անելի յարատեւութեամբ զգալի ըլլայ անոր թարմ հոգւոյ վրայ : Օրիորդներու կրթութեան ուրեմն ամեն բանէ առաջ՝ վասնզի օրիորդն է ապագայ մայր և մայրն է սին ընտանիքի, և ընտանիքի վրայ կըկրթեն թէ՛ ազգութիւն, թէ՛ ընկերութիւն, թէ՛ մարդկութիւն և թէ՛ բարոյութիւն : Աւելորդ է, կարծենք, փաստեր առաջ բերել և արեւու պէս յայտնի եղածը հաստատել : Ազգ մը կամ ցեղ մը ընտանիքներու քաղաքութիւն կընշանակէ և ոչ ուրիշ բան : Եթէ քաղաքութեան տարբեր մարքութիւն և ուրիշ յատկութիւններ չունին, ինչպէս քաղաքութեամբ ընտիր մարմին մը կրնայ կազմել, Օրիորդներու կրթութիւն ուրեմն ամեն բանէ առաջ՝ վասնզի ամեն բանէ առաջ ընտանիք : Եւ ի՞նչ պէտք է արդեօք որ հիմա իշխուի մէջ այսպիսի կրթութիւն մը սկսի ծլիլ, ծաղկիլ և քիչ ատենուան մէջ պատու բերել : Երբ բան : Մայրերու կողմէ հսկողութիւն,

(1) L'espérance est la vie du cœur de l'homme.
(2) L'avenir d'une nation est dans l'éducation d'une mère.

օրիորդներու կողմէ աշխատութիւն և Առաջնասեր ընկերութեան կողմէ օգնութիւն : Մայրերու կողմէ հսկողութիւն : Վասնզի մէկ իրենց պէս չկրնար զգալ տղայի մը նախնիութիւնը կամ յատկութիւնը և հետեւապէս զանոնք երեւան հանել՝ առաջինը դադարեց և երկրորդին ծնունդով տալով : Աւր քսան տարեքան մը չեն տեսներ , մայր մը մէկ նայուածքով ամեն բան կրնան և որովհետեւ անարատ սէր մըն է զինքը զրգոյն , շատ քիչ անգամ կը բախտի իր տեսածին վրայ :

Օրիորդներու կողմէ աշխատութիւն . վասնզի աշխատութեամբ միայն ամբողջային սրտաբոլոր կրնան զգնել և զիրենք կարծողութենէ ազատ պահել , աշխատութեամբ կրնան իրենց բնական ձիրքերը զարգարել կամ պակասութիւնները արմատաբար խլելով : Ընտելութիւնը սրբագործել : Երկար շնորհք՝ աշխատութեամբ կրնան արգելքները վերջնել և կատարելութեան հասնել , վասնզի աշխատութիւնն է յաղթող ամենայնի ինչպէս ըստ Ատոն հեղինակի մը :

Ընկերութեան կողմէ օգնութիւն . վասնզի ընկերութենէ ծագած զօրութիւնը այնքան մեծ է , որ աշխատութիւնը երկար առէն ընդդիմութիւն մը չէ բրած երբեք կանոնադր ընկերութեան մ'առնէ , և Առաջնասեր ընկերութեան պարտքն է մանաւանդ օրիորդներուն օգնութեան հասնել , վասնզի մարդկային սեռի տար մարմնակապցոյններու համար ունին անոնք : Արտաւտու վանքը հրապարակու որ Առաջնասեր ընկերութեան ընկերը մտական օգնութիւն միայն կրնայ ըլլալ , բայց երբ կրնա՞նք ընտանիքի վրայ կը լսենք , առիկ աւելի օգնութեան կարծողութիւն չունին ոչ օրիորդութիւնը և ոչ տղայութիւնը :

Քաջաւերութիւն ուրեմն , Առաջնասեր . և յաւտեութիւն : Հետեւ մեզմէ վախճ և վհատութիւնը : Ասկի ընկեր մէջ մը տղայութեան յաղթելու և տղայութիւնը յաղթուած կրնանք սեպել : Յաղթուած կրնանք սեպել այն առնէն ինչ որ տղայութիւնը և վատութիւնը՝ որոնք իրեն հոգեկնք արբանակներ են : Քաջաւերութիւն ուրեմն , զիտեղէք մէջ մը , ինչ համակրութեան նայուածքներ կը տեսնենք ձեր վրայ . և այսպիսի համակրութենէ աւելի ինչ կուզէք զիտուններու խորտակը չըրանք և անխղով բախտը համար դէպի ձեր նպատակը , որ է առաջնասիրութիւն և ազգասիրութիւն :

— Ըմոյս 16ին հինգշաբթի օրը սրբոյ թարգման , չացն մերոյ Մեսրոպայ և Սահակայ առնախմբութիւնը զեղեցիկ հանդիսի մը կատարուեցաւ : Իզմիրի Մեսրոպեան վարժարանին մէջ , 'ի ներկայութեան զերառնալորդական Փոխանորդ Հայր սուրբին , Ուսումնաւոր ընկերութեան մեծարդոյ անդամոց և խառն բաղնութեան ժողովրդեան :

Պատարագիչ քահանայն զգեստաւորեալ և ընկերութեամբ կը բերիկոսաց ու ծաղկահասակ գայիւններու որոց իւրաքանչիւրսն զլուրի դափնեայ պսակով զարդարուած էր , թափօրիս դպրոցը գաղով սուրբ Լեւոնարան մի կարգաց և պարագայիս յարմար ազօնք և զահարանական երգերէ ետե . սուրբ Մեսրոպեան վարժարանին տեսուչ և առաջին դասաւոր մեծարդոյ Ոսկանեան Պ . Ստեփանը ճառ մը կարդաց . զոր բաղնութիւն ուսումնասէր հանդիսականները ուշադրութեամբ մտիկ ընելով՝ ծափահարութիւն և ազգասիրական եռանդեամբ ողջունեցին :

Լինին սուրբ Մեսրոպեան վարժարանը Ուսումնասէր ընկերութեան բարեջան և բարեպաշտ ջանքը ամենայն բարեկարգութեամբ յառաջդրման վերայ է , ցաւալի սրտիւ յօգուած մի կարգացինք Սիւն ամսադրոյն Գոնիսի տետրակին մէջ , որ սոսկալի կերպիւ կը դատապարտէ և կը զգարտէ յիշեալ վարժարանին այժեան ընթացքը , յաւելցնելով թէ զբարտի , քրիստոնէական կրօնի և Հայոց պատմութեան գաստութիւնը ջնջուած է անոր մէջ , և այլն : Սակայն մեծապէս կը սխալի . վասնզի այս դասաւորութիւնները կը շարունակուին և ամենին չեն կրնար ջնջուիլ : Ինչպէս յիշեալ յօդուածոյն հեղինակն ալ՝ "ինչ հաւատալ գծուարին է" , կըսէ : Արցաւմք ուրեմն մեծապէս , որ Սիւնի նման ծանր ու խոհեմ ամսագիր մի ինչպէս առանց հիմնաւոր տեղեկութիւններ ստանալու Ուսումնասէր ընկերութիւնը կողմող մեծարդոյ ազգայնոց վրայօք՝ անխաբար կը բառապարտէ անոնց ազգասիրական բարեպաշտ ջանքը զոր շնորհակալութեան և քաջալերութեան արժանի կը համարին : Եւ միւսինս ժողովրդեան մնացող մասը :

Յիշեալ յօդուածը՝ սուրբ Երուսաղէմի վանքը սպուած ամսագիր մը մէջ հրատարակուած ըլլալուն

համար՝ շատ վշտալի տպաւորութիւն մի ըրաւ : Ինչմիւրի բոլոր ազգասիրաց վերայ :

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ուսումնասէր ընկերութիւնը պատիւ ունի հասարակութեան իմացընել թէ Ս . Հովհաննէանց դպրոցին հարցաքննութիւնը պիտի սկսի ամենայն 27ին երկուշաբթի առտու ժամը 10էն մինչև կէս օր , և կէսօրէն ետքը ժամը 3էն մինչև 5 :

Իսկ Ս . Մեսրոպեան դպրոցին հարցաքննութիւնը պիտի սկսի Գոնիսի Էին երեքշաբթի օրը :

Ուստի Ուսումնասէր ազգայինք կը հրաւիրուին իրենց ներկայութեամբը այս դպրոցները պատուել և եղած նոր բարեկարգութեանց ակնատես ըլլալ :

Մ Ս . Հ Ս . Գ Ո Յ Ժ

Իզմիրի հայազգի երեւելիներէն մեծարդոյ Պարծախեան մահտեսի Պողոս աղան , երկարատե հեւանութենէ մը ետե , ամսոյս 17ին իւր մահկանացու ընթացքը կ'ընթաց 'ի հասակի 75 ամաց , 'ի մեծ սուգ սրտի իւր բաղնութիւն աղնիւ ընտանեաց :

Հանդուցեալը՝ որ բարեպաշտ ու բարեսիրտ անձ մըն էր , իրեն նման բարի ու աղնիւ զաւակներ կը թաղու , որոնք իրենց հօրը յիշատակը անջինջ պիտի պահեն : Վախճանելոյն յուղարկաւորութեան տըխուր հանգիսը հետեւեալ օրը կատարեցաւ , որուն ուղեկից էին մեծ բաղնութիւն :

Կտալիոյ կառավարութեան պաշտօնաւորներ հետեւեալ կերպիւ վերահաղմուեցաւ .

Ռիքազուի սեպուհը պաշտօնէից խորհրդոյն նախագահ և ներքին գործոց տեսուչ :

Լամարմոսա զօրապետը՝ պաշտօնեայ առանց յատուկ պաշտօնի՝ որ զօրաբանակը պիտի գտնուի :

Սօսիւ Վիքթորի Վէնուսթա՝ արտաքին գործոց տեսուչ , Բէթինէնիօ զօրապետը՝ պատերազմի տեսուչ , Լնճիօլէթի զօրապետը՝ ծովային զօրութեանց , մօսիւ Դիալօթի՝ եկամտից և մօսիւ Վարտալ՝ երկրագործութեան :

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՕՍՄԵՆԵՆ ԵՐԿԵՐՈՒՂԻՈՅ ԻՕՄԻՐԷՆ ՄԻՆՁԵՒ ԸՅՏՐՆ

Ըյարնի ճամբուն բացուիլը , որ տեղի ունեցաւ Գոնիսի ին ըստ նոր տնայարի 1866 :

ԸՅՏՐՆ ԵՐԹԱՆՈՒ ՏՈՄՈՒԿԸՅ ԳԻՆԵՐՆ ԵՆ

Մարդոց համար Ընտան կարգ՝ 100 զուրուշ :

Չորս կարգ՝ 77 զուրուշ :

Յորդ կարգ՝ 60 զուրուշ :

Չիւրու համար

100 զուրուշ :

Լշերու համար 50 զուրուշ :

ԻՉՄԻՐԷՆ ԱՅՏՐՆ

Միւրն	Կայարանք	Հասարակ օր		Կիրակի օր		
		1	2	1	2	3
		Կ. Ա.	Կ. Ե.	Կ. Ա.	Կ. Ե.	Կ. Ե.
1 1/4	Իզմիր բուքրա	6. 0	5. 0	6. 0	3. 0	4.30
3 3/4	Բենէր	6. 7	5. 7	6. 7	3. 7	4.37
8 1/2	Պոնճա	6.20	5.20	6.20	3.20	4.50
13 3/4	Սիւսիգեօյ	6.35	5.35	6.35	3.35	5. 5
17 1/2	Ճումաօվաթ	6.50		6.50		
22 1/2	Տեփիկեօյ	7. 3		7. 3		
26 3/4	Գայաս	7.33		7.33		
30	Թրիանտա	7.43		7.43		
36 3/4	Թուրպալը	8. 3		8. 3		
41	Ճիւր	8.33		8.33		
48	Քօզուրնար	8.45		8.45		
	Սլասուլուք հաս .	9. 0		9. 0		
	» միկն .	9.15		9.15		
53 1/2	Ագիկիէ	9.50		9.50		
61 3/4	Պայարճըր	10.15		10.15		
67	Տեփիկեօյ	10.40		10.40		
74 1/2	Քարաբուրնար	11.10		11.10		
80 3/4	Սլաթն	11.30		11.30		

ԱՅՏՐՆԷՆ ԻՉՄԻՐ

Միւրն	Կայարանք	Հասարակ օր		Կիրակի օր			
		1	2	1	2	3	4
		Կ. Ա.	Կ. Ե.	Կ. Ա.	Կ. Ե.	Կ. Ե.	Կ. Ե.
6 1/4	Սլաթն	2. 0		2. 0			
13 3/4	Քարաբուրնար	2.20		2.20			
19	Տեփիկեօյ	2.40		2.40			
27 1/4	Պայարճըր	3. 0		3. 0			
32 3/4	Ագիկիէ	3.30		3.30			
	Սլասուլուք հաս .	4.15		4.15			
	» միկն .	4.30		4.30			
39 3/4	Քօզուրնար	4.45		4.45			
44	Ճիւր	4.57		4.57			
50 1/4	Թուրպալը	5.27		5.27			
54	Թրիանտա	5.47		5.47			
58 1/4	Գայաս	5.57		5.57			
63 1/4	Տեփիկեօյ	6.27		6.27			
67 1/2	Ճումաօվաթ	6.40		6.40			
72 1/4	Սիւսիգեօյ	7.30	7. 0	7.30	3.40	7. 0	7.30
77	Պոնճա	7.40	7.10	7.40	3.50	7.10	7.40
79 1/2	Քենէր	8. 0	7.25	8. 0	4. 5	7.25	7.55
80 3/4	Իզմիր բուքրա	8. 5	7.30	8. 5	4.10	7.30	8. 0

Գրատուն ընդհանուր վերատեսչի
Իզմիր , 'ի կայարան Բուքրայի 43—25 Գոնիսի 1866 :

Չ . Փ . ՉԱՐԼԹԸՆ
Ընդհանուր վերատեսչի :

—Պատերազմին վրայօք հասած լուրերը ստուգու-
թեան կարօտ են միշտ : Այսուհետ թէ Սիւնիքի և
Պոսթամիայի մէջ սաստիկ և արիւնհեղ կռիւ պատա-
հեցաւ : Աստուծոյ պէնտեք մարաջատը , որ դէպ 'ի
Պերլին կը յառաջանար , չուզէր է ինքուստեղ
զինադարձման խնդիրը ընդունելու :

Իտալիոյ մէջ , զօրաբանակը կը պատրաստուի եղեր
Սիւնիքի գետը վերստին անցնելու :

Փարիզէն Յուլիոս 3 ամսաթուով ըստ նոր տու-
մարի հասած հեռագիր մի կը ծանուցանէ թէ ինքու-
ստեղծ յաջողեցան միաւորելու Սիւնիքի և
Պոսթամիայի զօրաբանակներն : Պէնտեք մարաջա-
տին զօրքը միջուցաւ մինչև 'ի Վոնիկիկայի :

Իտալիոյ զօրաբանակը կը պատրաստուի եղեր վե-
րստին յարձակելու :

Հունիսի 12—24ին կատարի ճակատամարտութիւն
մի եղեր է : Աստուծոյ զօրքը 60,000 հոգիի կը հասնէր
որոնք մեծ քաջութեամբ կռուեցին : Իտալացիները
իրենց բռնած դիրքերը պարտաւորեցան թող տալու
Աստուծոյ զօրքը շատ օգնական զօրք հասնելու տեսնե-
լով : Այս ճակատամարտին մէջ կերել թէ իտալա-
ցիները մեծ միաս կրէր են : Ամէտէ իշխանը որ
Վիլիսթոր—Լամանուէլ թագաւորին որդին է , կուրծ-
քէն վիրաւորուեց : Տուրանոս , Աբրալէ և Վոյ-
ցանի զօրապետները նմանապէս վիրաւորուեցին
և Վիլիսթոր զօրապետի ալ սպանուեցին :

Իտալիոյ ձիաւոր զօրքը քանի մը անգամ կռուեց
են Աստուծոյ ձիաւոր զօրքի հետ որոնք մեծամեծ
ջեւաններ կրէր են : Դարձեալ կրտսի թէ 2006էն
աւելի աւստրիական զինուոր գերի բռնուեցին այս
ճակատամարտին մէջ :

Փարիզէն Յուլիոս 4 ամսաթուով ըստ նոր տու-
մարի հասած հեռագիր մի կը ծանուցանէ թէ բրուսիա-
ցիք տիրեցին Պոսթամիայի ձիաւոր քաղաքին : զինի
մեծ ճակատամարտի մը որուն մէջ 30,000 աւստ-
րիացի զինուոր կորսուեցին , բրուսիացի զօրքը
ծին նայելով :

Ինքուստեղ թագաւորը և մօսիւ աը Պիլմարք ճիթ-
սին կը զոհուին եղեր :

Պերլինէն Յուլիոս 4 ամսաթուով հասած պաշտօ-
նական հեռագիր մի հետեւեալ կը ծանուցանէ .

«Յուլիոս 3ին մեր զօրաբանակը մեծ յաջողութիւն
մի ստացաւ Աստուծոյ վերայ , որոնք խաբարուի-
ցեն անդին միջուցան : Իշխան կորուստները երկու
կողմէն ալ շատ մեծ են » :

—Ինքուստեղ հասած ուրիշ հեռագիր մի կը ծա-
նուցանէ թէ Վիլիսթորի թագուհին վերջապէս իւր
պաշտօնէն խորհրդոյն հրաժարականը ընդունելով ,
ըստ Տերպիլին յանձնեց է որ պաշտօնէն նոր խոր-
հուրդ մի կազմէ :

Փարիզէն Յուլիոս 5 ամսաթուով հասած հեռա-
գիր մի կը ծա. թէ Մոնիթթորը կը ծանուցանէ թէ
Աստուծոյ կը թողու զՎիլիսթորի Իսաղիոյ և անոր
միջնորդութեամբ զինադարձում կը խնդրէ : Այս
լուրը ստուգութեան կարօտ է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ , 22 ՅՈՒՆԻՍ

Ամսաթիւ 18ին օգոստոսի Սուլթանին գահակա-
լութեան վեցերորդ տարեդարձը մեծ շքեղութեամբ
կատարուեցաւ և դիշերը փառաւոր ճրագաւառութի
եղաւ բոլոր մայրաքաղաքին մէջ : Այս բարեպատեհ
առթիւ բարձրագոյն Լալի փաշան մեծ հացկերոյթ
մի տուաւ Պէպէքի իւր ապարանքը , որ փառաւորա-
պէս զարդարեալ և լուսաւորեալ էր : Բարձրագոյն
Դրան զինուոր պաշտօնատարները բարեկամութեամբ
թեանց զեպպանները և շատ երեւելի անձինք ներ-
կայ դատուեցան այս շքեղ խնջոյքին :

—Հրապարակական շինուածոց պաշտօնեայ վսեմա-
փայլ Հալիլ փաշան կայսերական հրովարտական
վաճառականութեան պաշտօնեայ ալ կարգեցաւ փո-
խանակելու փաշային :

—(Օգոստոսի Սուլթանը հաճեցաւ (Սմանիթ
կարգին առաջին աստիճանի ակադեմիոյ շքանշանը
շնորհելու բարձրագոյն Սեմ Լալարդոս Սէհեմ
մէտ ինչուի փաշային :

—Հանդուցեալ Տատեան Պօղոս—Պէլին դստեր
Սաղազդին օրիորդին նշանածը . որ է հայազգի
պայծառափայլ Պէհպուլթի իշխանը , անցեալ շաբ-

թու հասաւ 'ի Կ. Պօլիս Տիփիսէն գալով , իր հաս-
տատեն թէ մօտեցաւ անոնց ամուսնութեան հանգեւը
պիտի կատարուի :

—Կայսերական հրովարտական կարնոյ նահանգին
ընդհանուր կառավարութիւնը՝ Քասթամոնիի նա-
խորդ կառավարիչ վսեմափայլ Սէհեմիտ Սէհեմ
փաշային յանձնուեցաւ :

—Դարձեալ կայսերական հրամանաւ բարձրագոյն
տի ինչա փաշային որդին Իսաղիլ փաշան՝ զին-
ուորական խորհրդոյն անդամ անուանեցաւ և միան-
գամայն Կիլիկիոյ թեան աստիճան ընկալաւ :

—(Օգոստոսի Սուլթանը—Սուլթան կայսեր որդւոյն
բարձրագոյն Իսաղիլ փաշան իշխանին և իւր
հօրեղորդոց թիւաւորութեան ժամանակը մօտե-
ցած ըլլալով , մեծամեծ պատրաստութիւններ կը ըն-
դունէր այս բարեպատեհ առթիւ հրապարակական
տօնախմբութիւններ և շքեղ հանդէսներ կատար-
ուին 'ի Պէլլօր , Պոսթորի վերայ :

Այս առթիւ 5—6000 մահմադական տղայք ևս
պիտի թիւաւորուին . որոց համար Լորին Վէհափա-
նութիւնը հրաման տուած է որ պատրաստեն համապատ-
շինուի , և ծախքը իւր կայսերական դանձեն ըլլայ :

ՅԱՆՎԱՐԻ 25 ԳՆՈՒՄԻ :

Զմիւռնիա , 25 Գնոմի :

Ինչպէս զորագոյն նախընթաց թուովը կրուցեցին ,
ամսաթիւ 13ին օգոստոսի Սուլթան Սուլթան—Սուլթան
կայսեր գահակալութեան անդամութեամբ մեծ փառաւոր-
ութիւնով և շքեղ ծրագրաւորութեամբ կատարուեցաւ :

—Անցեալ շաբթուան 'ի վեր վսեմափայլ Սուլթանի
պէյ Պալմաշին 'ի իւր 'կը զանուի , երկաթուղիներուն
վիրաւորները պաշտօնի մէջ :

—Կայսերական հրովարտական , երրորդ կորդի
պաշտօնատարութեան (սպիտակ) աստիճան շնորհուցաւ
մեծարգոյ Տիւրան Էփէնդին , որ նահանգի ընդհանուր
կառավարութեան թարգման և խորհրդոյ քարտուղար
է : Ուրտի սրտի կարճաճարգինք այս աստիճանաբա-
լութիւնը , որ մեծ հաճութիւն պատճառեց ամենուն ,
վսեմի Տիւրան Էփէնդին 'ի անձնաւորութեամբ ծառայու-
թեամբ թէ՛ տեղական կառավարութեան և թէ՛ հաս-
տարակութեան համակրական նկրդ ձեռք 'իւրոյն է :

—Երեսուցէ մէկ կը ծանուցանէ թէ մարտիները սաս-
տիկ վնասներ ըրեր են նոյն քաղաքին և Պալմաշինի
դաշտերուն :

—Արեւմտե թէ մօտեցաւ Լորդոսի , Լորդինկանի ,
Մարտինի և Մուշի մէջ սաստիկ երկրաշարժ պատճա-
հէր և ծանր վնասներ պատճառեցին :

—Վերջապէս իրար կը զրկեն մեղ-

«Երկրաշարժի արձագանքով Փոլսի քաղաքին ամենայն
երեքշաբթի առաւօտուն հասաւ Աղէքսանդրիա և փա-
ռաւոր հանդիսի ընդունուելու , չորս քր շարք նախ
ամառաւորութիւն ու հրապարակական ուրախութիւններ
եղան . դիւերներն ալ շքեղ լուսաւորութիւններ , սյա-
րահանդէսներ և ցնծութիւններ եղան : Չորրորդ օրը
կայսերական հրովարտութիւն կարգաւորեցաւ , որով օգոս-
տոսի Սուլթանը՝ Լորդիսի փոխարեան պա-
հակալութեան փառաւորութիւնը օրուայ զրդի բարձր
Խալիլ փաշային կը թողու :

«Այս հրովարտակ կարգաւորութեամբ օրը՝ Լորին Բարձ-
րութիւնը երկրային փառաւոր հացկերոյթ մի տուաւ և
բոլորական տէրութեանց հրապարտութիւն :

«Յունիսի 12ին կրտսի օրը բարձրագոյն փոխա-
քայն Պալմաշին զնայ . ուր նաև փառաւորապէս ըն-
դունուելու , չորս օր մեծ տօնախմբութիւններ և
զինուորական շքեղ ծրագրաւորութիւններ և հրապարակա-
կան ուրախութիւններ եղան » :

—Աստուծոյ լրագիր մի՛ այս ընդարձակ տէրու-
թեան մէջ զտնուած բնակիչները 54,560,000 հոգիի կը
հանէ և կրտսի կողմանէ հետեւեալ կերպիւ կը բաժնէ զա-
նոնք . այսինքն՝ 24 միլիոն կաթոլիկ , 3 1/2 միլիոն հո-
մալական Յոյն , 10,000 Հայ . 3 միլիոն արեւելեան օր-
թոսօք , 3 միլիոն բողոքական , 1 միլիոն 50,090 հրեայ :

—Սաստիկ տաքերը սկսան քաղաքի մէջ . Ունուորի
ջերմաչափը 23—24 աստիճան կը շնչանայ ստուերի մէջ :

—Քաղաքի ոստիկանութիւնը երկու մահապարտ
զէյթէր բռնեց և բանտարկեց : Աստիճան կրտսի
թէ այս շաբթու Մանիսայի ճամբան երկու յոյս վաճա-
ռական սպաններ և կողոպտեր են , և անոնց ձիերը հնծ-
նելով իւրմիւր եկեր են գործաւորի տնակաւորութեամբ մի :

—Բամպակները սկսան քիչ մը շարժիլ , անցեալ
շաբթու 85 հակ աղէկ Քրքաղաճ ծախուեցաւ 570—
600 զօրուշի կենդինարը : Այս շաբթու դարձեալ
250 հակի չափ ծախու առին Վաստպայի և Տէնիզ-
լիի պատուական ուղարանք 640—680 : Ըստիկ Սպա-
նիայի և Թրեստու համար են . բայց Լնդոնի հա-
մար դնոյ առնող չկայ առայժմ :

Վիլիսթոր կուզուի . հին հունիսէն 44 կողով վաճա-
ռեցաւ 130ի չէքին և նորեն 20 կողով՝ 123 1/2ի :

ՀԻՄՆԱԴԻՆ ԲԱՐԵԿԱՍԵՐ



ԴԵՂԱՏԵՐ ՀԱՆՈՒՄԻ

ՋԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՆ ԲԱՐԵԿԱՍԵՐ

Մարդիկ զանազան կրթութեան (սիւնի) շատ յոգնած ըլլալը
ստուգելու ախտ մըն է և զիջելուն ամենապարզիկ շարժումը կանգնած
զբաղմունքներէն մէկն է . անոնքի մէջ գտնուելու «անոնք գե-
ղը» : Միակ դեղը՝ այս է . քիչ իսկ քիչի , քիչ քիչ , «անոնք
լից» ընկելը . «անոնք աղէկ կը ըլլայ» որ բոլորովին հեռանալու
նշանն է : Եւ ամենին ինչպէս «անոնք» իսկ ինքի , «անոնք
տեղ» թիւթի թիւթով (չափ) դո՛ւր հեղին : Արեւիկէն շաբթու
բարձր «ոգ» ծնէ : ամեն զինքն իմ դեղահամբերս երբեք կամ չեմ հա-
կըղէ : շատ միտ կերէի համեմունքներ (սոյս) հեռի կեցի : Եթե
այս օգտակար կանոնները ճշգրտութեամբ 'ի գործ դնելու ըլլաւ ,
միտքը շուտով արեւիկէ համապատեհ , մարմնիկը՝ առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնան թէ զինքն շարժումն ունեցար :

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԵՐ ԵՐԻՄԻԱՍՅԱՆ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութիւնց մէջ ,
թէ կողմերը չափէն աւելի զուլից կը ըլլան կամ թափանցանք ը-
լլար , թէ քաղք կամ աւազը երկրամասն կը հասնին կամ թէ ա-
նոնց մէջ ցաւեր կը գոյանան մեզքին համապատեհանած մեքը , Այս
«անոնք» հիւանդութեանց ժամանակը պէտք է Լորդինկէ փեղանակ-
քը անուի : Եւ ամեն հրապարակական համապատեհանած «անոնք» անհրաժեշտ
փեղ երկրամասն վարի կողմը «անհրաժեշտ» ժամանակը : Այս
գործարան անհրաժեշտ օգնութիւն մի պիտի մատուցանէ , լորինկէ եւ
բէշ զեղերը՝ զորս տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՏԱՐԱԲԱՆ ԵՐԻՄԻԱՍՅԱՆ

Որ և է զեղ մի շարքս անոնքի «անոնք» շարքս եւ
աղէկները զան շուտով ինչպէս այս դեղահամբեր . որոնք անհրաժե-
խանութեան կամ վատթար կերպովի պատճառաւ բոլոր թիւթ-
ուսութիւնը կը վնասեն և կը հասնին 'ի ինքնին (սիւնի) : «ա-
նոնք» գործողութիւնը կը կարգաւորեն . քիչ քիչ աստիճան
(սոյս) դեպքերու մէջ սրանցիկ ներգործութիւն մի ունի և լորինկէ
ու աստիճան ամեն անհրաժեշտութեան միշտ կը ի ծնէ :

ԲՈՐՈՒԹԻՒՆ ԵՐԻՄԻԱՍՅԱՆ (ԳԵՂԵՐ) ՀԱՅ ԵՒ
ՀԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հիւանդութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը
ամեն ախտն աւելի յոյժան կը պատահէ և երբեք աւելի վնաս-
աւոր է : Աստիճան գործողութեանց անհրաժեշտ ընթացքին առաջին շե-
շանները կրնան միշտ կարգաւորուիլ : Հալուելի հաշտաւոր գեղա-
հատից միջոցաւ : Աստիճան շուտով կը դարձան արեւն ու և աւ-
թամանակայ անհրաժեշտութիւնը , կը թիւթեցնեն խոցած շնչաւորն-
քը , կը բարեխառնեն շնչաւորութեան սաստիկ արագութիւնը և կա-
րողութիւնը կրնան շնչաւորութիւն ու թորեւուն զիւրութեամբ ու կա-
նոնաւորապէս գործելու : Այս դեղահամբերը՝ իրենց մարդկային
գործութեամբ կը սրեն արիւնը ամեն աղբիւրութիւններէ , և այս
եղանակաւ կը զօրացնեն զգրութիւնը (սիւնի) ընդհանր ծեւա-
կան արտի , շնչաւորութեան և ուրիշ թորային տկարութեանց :

ՏԱՐԱԲԱՆԱՆ ՍՏԱՐԱԲԱՆԱՆ ԲԱՐԵԿԱՍԵՐ

Տարբերութեան , թուութեան և շքեղութեան դեպքերու
մէջ , որոնք որ և է բնական կամ գերբնական շափազանցութեան յա-
ւաք եկած են , այս դեղահամբերը պայլայլէ և նորոգիչ ներգործու-
թիւնը՝ մեծապէս օգտակար է . քանզի մարդու թիւնը կը վերահաս-
տան , մարմնիկն ամեն հիւանդութեան իմ կանոնաւոր , շքեղ
գրութիւնը կը զօրացնէ , հիւանդին միտքը կը յարաբեր և վերջա-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հալուելի դեղահամբերը ամենին օգտակար դեղերն են հե-
տեւեալ հիւանդութեանց համար :

Հիւանդութիւն , Զօրացաւորութիւն , Թորացաւորութիւն ,
Մարմնային ախտ , Տեսաւորութիւն , Տաք որովայնի ,
Խիթ (սոյս) , Զրգողութիւն , Միջադեպութիւն ,
Հարբուղի , Անհրաժեշտութիւն , Բորբոքում ,
Երեւոյն արտ , Կալուել , Ախտ ընդերաց ,
Թանջ (սոյս) , Բարեխառն սրտի , Անհրաժեշտութիւնը կա-
խոյլ պարանոցի , Քար կամ խիճ միջա- նանց ,
Արեւորութիւն , Նոցի , Մարմնային հիւանդու-
թիւնը հիւանդութիւնը Գլխացաւորութիւն , Թիւնը ,
Փողացաւ , Արդողիտեան ախտ , Խոցողութիւն :

Այս դեղահամբերը , որ կը ինքնին Հալուելի բժշկին անձա-
կան վերաւորութեամբ , կը վաճառեն իւր գործարանը 'ի Լոր-
տան , Սիթիս կողման թաղը Թիւն 234 , 'ի դին 1 և 1 1/2 ըլլա-
նի , 2 1/2 և 4 1/2 ըլլան տուիւր , ըստ մեծութեան տիպի :

Գիտել արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն ընդհանր
որոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տպի մէջ 'ի տեղե-
կութիւն հիւանդաց , ամեն պարագայից մէջ :

ԽՈՐԱԳԻՐ—ՄԵՐ ԵՐԱՐՈՅՈՅ

Պ. Կալա Պ. Պալապալեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՑՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ